



Լիբանանեան Լուրեր

Վեհափառ Հայրապետը՝ Լիբանանի Մէջ Սեուտական Արաբիոյ Դեսպանին ԻՖթարի Հիւրը



Ընդառաջելով Լիբանանի մօտ Սեուտական Արաբիոյ դեսպան Ուալիտ Էլ-Պուխարիի հրաւերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ներկայ գտնուեցաւ դեսպանին տան մէջ կազմակերպուած իՖթարին: Հրաւերին ներկայ էին Նաեւ Լիբանանի համայնքներու հոգեւոր պետերը, Ծոցի երկիրներու դեսպաններն ու Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպանուհին:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ ընդհանուր խորհրդակցութիւն մը ունենալու Լիբանանը յուզող հարցերուն շուրջ:

Հայկական Լուրեր

«Պիտի Հականելինք Կառավարութեան Շէնքը». Հակակազային Դիմակներով «Չիտուած» Քաղաքացիներ Բողոքի Գործողութիւն Կատարեցին

Մենք կը պատրաստուինք երկիրը մաքրելու այլաստերումէն. կը պատրաստուինք ախտահանելու կառավարութեան շէնքը, եւ մեր հիւանդը վերադարձնենք բնակութեան վայր: Այս մասին, երէկ Ապրիլ 27-ին, Հանրապետութեան հրապարակին մէջ շարժման ժամանակ յայտարարեց Ազատագրական շարժում Նախաձեռնութեան համահիմնադիրներէն Վահագն Չախալեանը: Ան ու շարժման կարգ մը անդամներ, խորհրդանշական կերպով հագած են հակակազային դիմակներ, բժշկական խալաթներ, ձեռքերնին ունին ախտահանման համար Նախատեսուած գործիքներ: Չախալեան ըսաւ, որ հակակազը պիտի ըլլայ Նոր իշխանութեան լաւագոյն գործիքներէն մէկը, կոչ ըրաւ բոլոր ընդդիմադիրներուն ձեռք բերելու հակակազ:

Շարժման մասնակիցները իրենց ձեռքին ունին «ոչ այլասերման», «Նիկոլ հեռացիր» գրութիւններով պաստառներ:



Շար. Էջ 08



Լիբանանի Երեսփոխանական Ընտրութիւններ

Մայիսի 15ին Ձեր Քուէն Տուէ՛ք ՌԱԿ-ի Չօրակցած Թեկնածուներուն



Մերձի Ընտրաշրջանին Մէջ
Ընտրեցէ՛ք
ԱՐԱ ՊԱՐՏԱԳԾԵԱՆԻՆ



Պէյրուզ Ա. Ընտրաշրջանին Մէջ
Ընտրեցէ՛ք
ՓՈԼԱ ԵԱԳՈՒՊԵԱՆԻՆ



Չաիլի Ընտրաշրջանին Մէջ
Ընտրեցէ՛ք
ՆԱՐԵԿ ԱՐԱՅԱՄԵԱՆԻՆ

Լիբանանի Երեսփոխանական Ընտրություններ 2022

**Պեյրուբ Ա. Ընտրաշրջանի
Հայ Առաքելական Աթոռի
Երեսփոխանական Թեկնածու՝
ՓՈԼԵԹ ՍԻՐԱԿԱՆ ԵԱԳՈՒՊԵԱՆ**



Փոլեթ Սիրական Եագուպեան ծնած է 4 Ապրիլ, 1976-ին, ծագումով հայ լիբանանցի:

Ի մոտի ունենալով, թե ան որպես աքթիլիստ մեծ ներդրում ունեցած է ընկերային եւ մարդկային իրաւանց հարցերու մէջ, 2013 թուականին հիմը դրաւ ՏԱՖԱ արշաւին, որ շնորհիւ իր վիթխարի աշխատանքներուն՝ կը համարուի Լիբանանի և Միջին Արեւելքի ամենամեծ և ամենայաջողած բարեսիրական արշաւներէն մէկը: Սկզբնական շրջանին ամենամեայ արշաւ էր ՏԱՖԱ, սակայն հետագային վերածուեցաւ մշտական արշաւի՝ առնչուած բացառիկ մարդկային իրադարձութիւններու հետ: 2019 թուականի հոկտեմբերին, Լեռնալիբանանի մէջ ծայր տուած էին անտառային հրդեհներ, որուն պատճառով շրջանի բնակչութիւնը կարիքը ուներ մարդկային օգնութեան եւ տնային կենսական առարկաներու: Փոլեթ Եագուպեան անմիջապէս իր շուրջ համախմբեց ընկերային ծառայողներու հսկայական խումբ մը օգնութեան փութալու համար թէ՛ շրջանի բնակչութեան եւ թէ՛ հրշէջներու եւ շտապ օգնութեան կազմին: Կարճ ժամանակ անց արդէն իսկ Լիբանանեան տնտեսութիւնը սկսաւ փլուզում արձանագրել, որ ցայսօր ոչ միայն կը շարունակուի, այլեւ առաւել եւս անկում կ'արձանագրէ, յատկապէս Covid-19 համաճարակէն ետք: ՏԱՖԱ արշաւը իր հիմնադրութեան օրէն սկսեալ ոչ մէկ պահ դադրած է իր գործունեութեան ծիրէն ներս փորձել ապահովել կարիքաւոր ընտանիքներուն օժանդակութիւն մատակարարել, յատկապէս մեր ազգի պատմութեան այս վճռորոշ ժամանակաշրջանին մէջ գոյատևելու համար:

• Զաղաքական աքթիլիստ, «Ազգային Դաշինք»ի անդամ 2018-էն ի վեր: Լիբանանի խորհրդարանի երեսփոխանուի Փոլեթ Եագուպեան, 2018 թուականէն ի վեր մինչև 2020 թուական օգոստոսի 4-ը, Պեյրուբի նաւահանգիստի մէջ տեղի ունեցած պայթումի յանցագործութենէն ետք, ներկայացուց իր հրաժարականը՝ ի նշան բողոքի շահագրգիռ իշխանութիւններու անփութութեան և այս նողկալի յանցագործութեան պատասխանատուութիւն չկրելու դէմ, և ի համերաշխութիւն զոհերու և տուժածներու ընտանիքներուն:

Եագուպեան վերջին տարիներուն յայտնի է որպէս Լիբանանի ամենէն ազդու կին լրագրողներէն մէկը: Ան աշխատած է որպէս քաղաքական հաղորդումներու հաղորդավար լիբանանեան և արաբական հեռուստակայաններու մէջ: Նկատի ունենալով անոր ունեցած լայնատարած ազդեցութիւնն ու գործունեութիւնը՝ Համաշխարհային դրամատունը զինք ընտրեց որպէս իր արտաքին խորհրդատուական Յանձնախումբի անդամ բազմազանութեան, կանանց իրաւունքներու պաշտպանութեան և կենտրոնային հաւասարութեան ծիրէն ներս անոր ծաւալած գործունեութեան ու ջանքերուն համար, ինչպէս նաև կանանց «քրթա»յի կատարի ջատագովը ըլլալուն համար: Ան կը համարուի քաղաքական կեանքին մէջ լիբանանցի կանանց մասնակցութեան դարպասը, որ Լիբանանի մէջ կը յանգեցնէ աւելի ընտրական օրէնքի ընդունման եւ



**Պատմութեան
Մէջ Այսօր**

Աղեքսանդր Ծատուրեան


Աղեքսանդր Յովսէփ Ծատուրեան (28 Ապրիլ, 1865, Չաքաթալա, Ռուսիոյ կայսրութիւն – 31 Մարտ, 1917, Թիֆլիս), հայ բանաստեղծ, թարգմանիչ:

Ծնած է Չաքաթալա, երեք տարեկանին կորսնցուցած է հայրը, որ ձկնորս էր ու մօր հետ կը մնայ յետին չքաւորութեան մէջ:

Աղեքսանդր Ծատուրեանը սորված է ծննդավայրի դպրոցը, աշակերտած է Արշակ Ազապեանը: Ուսումը շարունակելու համար 1881 թուականի աշնանը անցած է Թիֆլիս՝ Ներսիսեան դպրոց ընդունուելու երազանքով, որը չէ իրականացուած: Բանուորութիւն ըրած է խճուղիի շինարարութեան, աշխատած է որպէս գործակատար: Ի վերջոյ, 1883 թուականին, զինք կ'ընդունին Միքայելեան արհեստից վարժարանը, ուր սակայն չի կրնար երկար մնալ: 1887-ին, Նիժնի Նովկորոտի մէջ կը ստանձնէ հայ վաճառականի մը զաւկին ուսուցչութիւնը, եւ, նոյն ընտանիքին հետ, կը կը փոխադրուի Մոսկուա: Կապ կը հաստատէ ուսանողութեան հետ, որոնց կարգին՝ Սմբատ Շահագիզի:

1891-ին կը հրատարակուի իր բանաստեղծութիւններու առաջին հատորը: 1898-ին երկրորդը: 1901-ին լոյս կ'ընծայէ երգիծական կարգ մը էջեր՝ «Գրչի հնարքներ» անունով:

Կեանքին իսկ բերումով Ծատուրեանի քերթողութիւնը խառնուրդ մըն է անարդարութեան դէմ ընդվզումի, վշտի եւ տառապանքի: Չինք կը գտնենք մօտիկ՝ համեստ,



աշխատաւոր, անիրաւեալ դասակարգին. պանդուխտներուն: հայրենասիրութիւնը բռնկուն կրակ մըն էիր հոգիին մէջ, ու հաւատայ թէ «արեան գնով» ու մարտիրոսներու եւ նահատակներու ճամբով միայն կարելի է ազատութիւն ձեռք ձգել: Մեր ազատագրական պայքարի առաջին երգիչներէն մէկն է: Սասնոյ 1893-1894-ի ապստամբութեան նուիրած է «Որդեկորոյս մայրերին» խորագրուած իր բանաստեղծութիւնը՝ որ հրաւեր մըն է չորքալու եւ չազալու կորուստը անոնց, որոնք ազատութեան համար կ'իյնան:

Նաեւ սիրային իր երգերուն մէջ, Ծատուրեան կը յատկանշուի չգոհացուած, անտեսուած, որբացած մարդու հոգեբանութեամբ: Տառապանքը ամենէն ցայտուն գիծն է իր քերթողութեան, ու թէեւ մեծ սլացքներ կամ ներշնչումի զօրեղ թափ չունի, սակայն խորունկ եւ ապրուած զգացումներու մէկտեղում մըն է արտայայտութեան միջին կարելիութիւններով:

արդարադատութեան:

Իր մասնագիտական գործունեութեան մեկնարկէն ի վեր, Փոլան հանրայայտ է որպէս շրջակայ միջավայրի ու բնապահպանութեան ամենայայտնի պաշտպաններէն մէկը և աջակցած է ու նպաստած շրջակայ միջավայրի պահպանման ուղղուած բազմաթիւ միջոցառումներու իրականացման: Խորհրդարանական հրաժարելէ ետք իր առաջնահերթ ուշադրութիւնը դարձուց բնապահպանական գործունեութիւնը, կանխելու օրէնքներու ընդունումը, որոնք կը նպաստեն աւելի շատ աղտոտման, յատկապէս՝ թափոններու ճգնաժամին հետ առնչուած:

Մրցանակներ

Փոլեթ Եագուպեան իր մասնագիտական ասպարեզի ծիրէն ներս արժանացած է բազմաթիւ մրցանակներու: 2017 Օգոստոսին, Լիբանանի մէջ Պելճիքայի դեսպան Ալեքս Լեւաեթը անոր պարգևատրեց «Թագաւորական բարձր շքանշան»ով, որ շնորհուեցաւ Պելճիքայի թագաւոր Լուի-Ֆիլիպ Լեոպոլդ Մարիի կողմէ՝ առ ի գնահատանք անոր լրատուամիջոցներու, մարդասիրական և բնապահպանական աշխատանքի և կանանց հարցերու հզօրացման գործունեութեան մէջ ունեցած հսկայական դերին համար:

«Զարթոնք» Հայրենիքի ՄԷԶ - 71 -

Ներգրաւել Նիկոլ Փաշինեանին Որպէս Մեղադրեալ. Ազատագրական Շարժումը Սկսում Է Պայքարի Նոր Փուլ

ՔՐԻՍԹԻՆԱ ԱՂԱՆԱՐՅԱՆ

«Զարթոնք»ի Երեւանի Աշխատակալից

Ազատագրական շարժումը շարունակում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականի պահանջով սկսած ստորագրահաւաքը, որին միացել է աւելի քան 18 հազար մարդ: Դրան զուգահեռ Շարժումը սկսում է պայքարի նոր փուլ, որի մասին անդամները Հիւսիսային պողոտայում հրաւիրուած բացօթեայ մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեցին:



Շարժման անդամ Նայիրի Հոխիկեանն իր խօսքում յիշեցրեց՝ իրենք պայքարը սկսել են դեռեւս 2021 թուականի նոյեմբերից եւ այսօր էլ շարունակում են իրականացնել անհնազանդութեան գործողութիւններ, այդ կերպ արտայայտելով իրենց բողոքը գործող իշխանութիւնների վարած քաղաքականութեան դէմ:

«Մենք սկսեցինք ավտոերթով, ապա մեր պայքարը շարունակեցինք Երեւանի հանրապետութեան հրապարակում, որտեղ մօտ 10 օր բողոքի ցոյցեր տեղի ունեցան: Մեր պահանջները մի քանիսն են՝ չիրականացնել սահմանազծում եւ սահմանազատում այն պահանջներով, որն Ազրայեճանն է թելադրում, թոյլ չտալ Սիւնիքի մարզով միջանցք տրամադրել Ազրայեճանին եւ պատշաճ կերպով զինել հայկական բանակը: Մենք մի շարք ուխտագնացութիւններ կատարեցինք, բազմաթիւ ակցիաներ, իսկ փետրուարի 25-ից սկսել ենք ստորագրահաւաք: Ազատագրական շարժումը որոշակի յաջողութիւններ ունեցաւ», - ներկայացրեց Նայիրի Հոխիկեանը: Վերջինս նշեց, որ այսօրուանից սկսած իրենք իրականացնում են բողոքի գործողութիւնների մէկ այլ փուլ, որի մասին աւելի հանգամանաւոր խօսեց Շարժման խորհրդի անդամ Սեւակ Յակոբեանը:

Յակոբեանը նախ ներկայացրեց առաջիկայ մէկ շաբաթուայ ծրագիրը, որոնք բաղկացած են հինգ թեմայից՝ ազատագրում ներքին եւ արտաքին թշնամուց, ազատագրում այլասերումից, ազատագրում պառակտուածութիւնից, ազատագրում ստիգ ու ստախոսներից եւ ազատագրում վախերից ու վախկոտութիւնից:

Շարժման պայքարի գործողութիւնները իրենցից ենթադրում են իրազեկման ակցիաներ, բողոքի ցոյցեր, հաղորդում Գլխաւոր դատախազութիւնում Նիկոլ Փաշինեանին որպէս մեղադրեալ ներգրաւելու պահանջով: Ի դէպ՝ Շարժման անդամները քաղաքացիներին յորդորեցին ապրիլի 27-ին Հանրապետութեան հրապարակում կազմակերպուելիք բողոքի ցոյցի ժամանակ իրենց հետ ունենալ Նիկոլ Փաշինեանի «Երկրի հակառակ կողմը» գիրքը, ինչպէս նաեւ, իրենց խօսքով, այլ այլասերուած գրքեր՝ աղբամանը նետելու եւ դրանցից հրաժարուելու համար:

Ազատագրական շարժման անդամ Արա Չօհրապեանն իր խօսքում շեշտեց՝ այսօրուայ գործողութիւնների թեման է ազատագրում ներքին եւ արտաքին թշնամուց: Այդ համատեքստում Չօհրապեանը մանրամասն ներկայացրեց Գլխաւոր դատախազութեանը փոխանցուող իրենց գրութիւնը:

«2020 թուականի դեկտեմբերի 22-ին աւելի քան 420 փաստաբան յանցագործութեան մասին հաղորդում են ներկայացրել ՀՀ գլխաւոր դատախազին՝ պահանջելով դաւաճանութեան յօդուածով յարուցել քրեական գործ, որի գլխաւոր դերակատարը Նիկոլ Փաշինեանն է: Բնականաբար դա գլխաւոր դատախազութեան համար չհանդիսացաւ հիմք քրեական գործ յարուցելու համար: Փաստաբանների կողմից բողոքարկման բոլոր ատեաններն անցնելուց յետոյ հասանք նրան, որ դատարանը որոշում կայացրեց՝ քրեական գործ յարուցել: Հիմա այդ քրեական գործի շրջանակում մենք այսօր պահանջելու ենք Նիկոլ Փաշինեանին որպէս մեղադրեալ ներգրաւել: Համառօտ ներկայացնեմ, թէ ինդիրը որն է: Նախ, եթէ, ըստ Նիկոլ Փաշինեանի, բանակցային գործընթացը ձախողուած էր ու չունէինք ներուժ հակադարձելու Ազրայեճանական զինուած ուժերին, ապա անտրամաբանական էին դրան նախորդած նրա գործողութիւնները», - ասաց Արա Չօհրապեանը:



Նա հերթականութեամբ ներկայացրեց Փաշինեանի այն բոլոր գործողութիւնները, որոնք, իր խօսքով, հրահրեցին պատերազմ, այն պարագայում, երբ տարբեր առիթներով յայտարարութիւններ էին հնչում այն մասին, որ Հայաստանը չի կարող դիմագրաւել Ազրայեճանական զինուժի հարուածներին: «Այդ արարքներից մէկը 2019 թուականի օգոստոսին «Արցախը Հայաստան է եւ վերջ» յայտարարութիւնն է: Դուք յիշում էք, որ նրա որդու՝ Աշոտ Փաշինեանի գորացրումից (2020թ. յուլիսի 9) մի քանի օր անց՝ 2020 թուականի յուլիսի 12-ին Տավուշում տեղի ունեցաւ ռազմական բախում: Դրանից յետոյ օգոստոսի 28-ին տեղի ունեցաւ պարզեւատրման աննախադէպ գործողութիւն՝ 16 զինծառայող պարզեւատրուեց Մարտական խաչ առաջին աստիճանի շքանշանով, իսկ 55 զինծառայող՝ Մարտական խաչ երկրորդ աստիճանով: Ռազմական բախման ռիսկի պայմաններում, Նիկոլ Փաշինեանի այս արարքները հրահրում էին դրանց օր առաջ սկսումը: Դրանից յետոյ Ազրայեճանական մամուլում լոյս տեսաւ Էմիսարների բանակցութիւնների մասին յօդուածներ, որտեղ ակնարկւում էր, որ Նիկոլ Փաշինեանն իր ներկայացուցչի միջոցով բանակցում է Ազրայեճանական կողմի հետ: Դրանից յետոյ սկսուեց պատերազմը: Այս ամենի մասին մենք, չգիտես ինչու, մոռացանք: Պատերազմից յետոյ մենք հասկացանք, որ Փաշինեանը ժամանակ ու հնարաւորութիւն է ունեցել դադարեցնելու պատերազմն, ինչը չի արել: Դրա մասին պնդել են ինչպէս զինուորական գործիչները, այնպէս էլ ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինը: Այնուհետեւ, նոյեմբերի 9-ին ստորագրուած եռակողմ պայմանագրում յստակ գրուած էր, որ իւրաքանչիւր կողմ մնում է մինչ այդ զբաղեցրած դիրքերում: Բայց Նիկոլ Փաշինեանի թողտուութեամբ մենք ունեցանք լուրջ կորուստներ՝ Որոտանը, Շուռնուխը յանձնուեց Ազրայեճանին: Պատկերացնում էք՝ Սիւնիքի մարզի եւ Իրանի հետ կապող միակ հիմնական ճանապարհը յանձնուեց Ազրայեճանցիներին: Հետագայում պարզուեց, որ դա տեղի է ունեցել Նիկոլ Փաշինեանի հրամանով, որի իրաւունքը ինքը չունէր: Եւ իհարկէ յիշում էք դրանից յետոյ մեր տարածքներ ներխուժումները, Նիկոլ Փաշինեանի խոստովանութիւնները, ռազմական գործողութիւնները, գոհերը: Մինչ օրս էլ մենք շարունակում ենք ունենալ կորուստներ: Եւ այս պայմաններում մեր ժողովուրդը ոչինչ չի ասում», - մանրամասն ներկայացրեց Արա Չօհրապեանը, ապա յաւելեց՝ Ազգային ժողովում ապրիլի 13-ին ու 14-ին Փաշինեանի կողմից արուած խոստովանութիւնները ուղիղ ապացոյցն են, որ այս ամենի պատասխանատուն ինքն է:

Չօհրապեանը շեշտեց եւս մէկ կարեւոր փաստ՝ գտնուելով ռազմական բախումների կիզակետում, մինչ այսօր Չինուած ուժերի գլխաւոր շտաբի նշանակուած պետ չունենք:

«Ես չգիտեմ ինչպէս կիսեմ անհանգստութիւնս, բայց սա ուղիղ հակասում է մեր ազգային անվտանգութեանը: Հաշուի առելով Ռուսաստան-Ուքրանիա ռազմական գործողութիւնները, շատ հնարաւոր է, որ Հայաստանում երկրորդ ճակատ բացուի: Ամեն օր կարող է ռազմական բախում տեղի ունենալ, բայց մենք չունենք գլխաւոր շտաբի պետ: Սա նոյնպէս պատահական չէ, սա Նիկոլ Փաշինեանի քաղաքականութեան մի մասն է:

Լիբանանահայ Կեանք

ՀԲԸՄ-ՅԵԸ Վերահաստատեց Հայ Ժողովուրդի Իրաւունքներու Պաշտպանութեան Ի Խնդիր Իր Ուխտը

Հայ ժողովուրդին եւ ՀԲԸՄ-ՅԵԸ ընտանիքին համար Ապրիլ 24-ը պահանջատիրութեան եւ ուխտի վերանորոգման օր է: ՀԲԸՄ-ՅԵԸ-ը իր բոլոր միաւորներով մասնակցեցաւ Լիբանանի մէջ տեղի ունեցող Հայոց Յեղասպանութեան յիշատակի ոգեկոչման գլխաւոր հանդիսութիւններուն:



Ստորեւ, ժամանակագրական կարգով Կիրակի, 24 Ապրիլ 2022-ի միջոցառումներուն արձագանգը: Կիրակի, 24 Ապրիլ 2022-ի առաւօտեան, ՀԲԸՄ-ՅԵԸ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, ՅԵԸ-ի տարբեր մասնաճիւղերու վարչութիւններու անդամ-անդամուհի-

ներ, համակիրներ, ՅԵԸ Անդրանիկ Անթիլիաս սկաւտական շարժումի երեցներ, քարավելներ, սկաւտներ եւ արեւուշներ, ՅԵԸ Անդրանիկ փողերախումբին գլխաւորութեամբ, ՀԲԸՄ-ի Տեմիրճեան կեդրոնէն տողանցեցին դէպի Անթիլիասի մայրավանք:

Տպաւորիչ էր ՀԲԸՄ-ի, ՅԵԸ-ի, Հայաստանի եւ Լիբանանի դրօշներով հարիւրաւոր ՅԵԸ-ականներու շքերթը դէպի մայրավանք: Տողանցքի ընթացքին հնչեցին ազգային, հայրենասիրական նուագներ:

Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Հայոց Յեղասպանութեան զոհերու յիշատակին հոգեհանգստեան պաշտօնէն ետք, ի շարս ազգային եւ պաշտօնական ներկայացուցիչներու, որոնց մէջ՝ ՀԲԸՄ-ի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի եւ ՅԵԸ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ:

Պատարագի աւարտին, մայրավանքի Նահատակաց Մատուռին



առջեւ տեղի ունեցաւ ծաղկեպսակ-նրու զետեղում: ՀԲԸՄ-ի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի անունով՝ Վիգէն Զերչեան եւ Սիլվա Լիպարիտեան, ՅԵԸ-ի Կեդրոնական Վարչութեան՝ Յակոբ ճղլլեան, Հայկ Եսայեան եւ Նշան Դորդորեան, ՅԵԸ-ի Ասպետներու Համախմբումի՝ Արթուր Գունտաքճեան, Կերրի Ֆաթալ, ՀԲԸՄ-ի Լիբանանի կրթական Յանձնախումբի՝ Արտա Եանիկեան, Սինթա Մենտիլեան, ՀԲԸՄ-ի Լիբանանի Տիկնանց համախմբումի՝ Շողիկ Պաղտա-



սարեան, Շողիկ Պերտոյեան ծաղկեպսակներ զետեղեցին Նահատակաց մատուռին առջեւ: Այս միջոցին ՀԲԸՄ-ՅԵԸ-ի Անդրանիկ փողերախումբը կատարեց Շփենի «Մահերգ»ը:

Յեղասպանութիւն 100+7

Պոլսոյ Մէջ Յարգանքի Տուրք Մատուցուած Է Հայոց Յեղասպանութեան 2ոհ Հայ Մտաւորականներու Յիշատակին

Պոլսոյ հայաշատ Զուրթուլուշ թաղամասին մէջ, որ ցեղասպանութեան տարիներուն կը կրէր Թաթաւա անունը, յարգանքի տուրք մատուցուած է Հայոց Յեղասպանութեան ժամանակ Նահատակուած հայ մտաւորականներու յիշատակին: Այս մասին կը հաղորդէ Ermenihaber.am-ը՝ վկայակոչելով sendika.org-ը:

107 տարի առաջ՝ Ապրիլ 24-էն քանի մը օր առաջ, նոյն այս թաղամասին մէջ սկսաւ հայ մտաւորականութեան ձերբակալութիւնը:

Յարգանքի տուրք մատուցուած է Նաեւ «Ակօս» թերթի հիմնադիր խմբագրապետ Հրանդ Տինքին եւ Թուրքիոյ զինուած ուժերուն մէջ պարտադիր ծառայութեան ժամանակ 2011թ. Ապրիլ 24-ին սպաննուած Սեւակ Պալլաքչիին:

Ձեռնարկին մասնակցած է Թուրքիոյ քրտամէտ, ընդդիմադիր «Ժողո-

վուրդներու դեմոկրատական կուսակցութեան» (HDP-ԺԴԿ) հայ պատգամաւոր Կարօ Փայլանը: Մասնակիցները կոչ ըրած են Թուրքիոյ իշխանութիւններուն ամերեսուելու իրականութեան հետ եւ քայլեր ձեռնարկելու այդ ուղղութեամբ:

«Այլեւս չենք ուզեր, որ այս հողերը տեսնեն Թալէթ, Էնվեր, Ծեմալ փաշաներ, Պեհաեմտին Շաքիրներ», - Նշուած է յայտարարութեան մէջ:

«Կ'ուզենք, որ այս հողերը բոլոր ժողովուրդներու եւ հաւատքներու համար շարունակեն ըլլալ հայրենիք մը, որ պիտի ունենայ Չապէլ Եսայեանի, Կոմիտասի, Մկրտիչ Մարկոսեանի, Հրանդ Տինքի, Սարգիս Սերոբեանի, Ահմէթ Զայայի, Եաշար Զեմալի, Թահիր Էլչիի եղբայրական ոգին», - Նշած են ձեռնարկի մասնակիցները:



Լիբանանահայ Կեանք

Ծաղկեպսակի Չետեղում Հայոց Ցեղասպանության Պիքֆայայի Յուշարձանին Առջեւ



Նոյն օրը առաւօտեան, ՀԵԸ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Յակոբ Ճըղլեան, ՀԵԸ Անդրանիկ Անթիլիասի Գործադիր վարչութեան անդամ, ՀԵԸ Անդրանիկ Անթիլիասի սկաուտական վարչութեան ատենապետուհի Թային Ինքնատիոսեան, ՀԵԸ Անդրանիկ Անթիլիասի երեցներէն եւ քառավելներէն բաղկացած Ներկայացուցչական կազմ մը, Հայաստանի, Լիբանանի եւ Միութեան դրօշներով այցելեցին Պիքֆայայի Սուրբ Աստուածածին վանքը եւ ծաղկեպսակ մը զետեղեցին Հայոց Ցեղասպանութեան Նահատակներու յուշարձանին առջեւ:



Ծաղկեպսակի Չետեղում Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի Հայոց Ցեղասպանութեան Յուշարձանին Առջեւ

Կիրակի, 24 Ապրիլ 2002-ի առաւօտեան, ՀԲԸՄ- ՀԵԸ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Վիգէն Չերչեան, ատենադպիր՝ Յակոբ Թելվիզեան, ՀԲԸՄ-ի Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի անդամ տորթ. Գրիգոր Սահակեան,

պետական երեսփոխան Ժան Թալուզեան, ՀԵԸ Անդրանիկ Սեւան Գործադիր Մարմնի ատենապետ Նշան Ղորղորեան, ՀԵԸ Անդրանիկ Սեւան մասնաճիւղի սկաուտական Ներկայացուցչական կազմը, ՀԵԸ- Անդրանիկ



փողերախումբը զվիսաւորութեամբ եղբ. Ռաֆֆի Գոգեանին, մեծ թիւով միութենականներու ընկերակցութեամբ այցելեցին Հայ Կաթողիկէ պատրիարքարան:

Պատրիարքարանի մուտքին անոնց դիմաւորեց Հայ Կաթողիկէ

Պատրիարքութեան Պէյրութի Թեմի օգնական արհիպատիւ Գեորգ եպս. Ասատուրեանը: Յանուն Կաթողիկէ պատրիարքութեան տէր Ռաֆֆի քինյ. Յովհաննէսեան փոխանցեց օրուան պատգամը: Ապա տեղի ունեցաւ ծաղկեպսակի զետեղում:

Առողջապահական

Ձայնի Փոփոխութիւնները Կրնան Վկայել Քաղցկեղի Մասին

Մեծն Բրիտանիոյ Առողջապահութեան ազգային ծառայութիւնը (NHS) անդրադարձած է ձայնի փոփոխութիւններու հարցերուն ըսելով, որ ձայնի փոփոխութիւնները կրնան վկայել քաղցկեղի մասին եւ յանձնարարած է, որ յատուկ ուշադրութիւն դարձուի այդ փոփոխութիւններուն, նշած է Daily Express-ը:

Քաղցկեղը կրնայ ախտորոշուիլ նաեւ շարք մը այլ ախտանշաններով՝ կլլելու դժուարութիւն, կշիռքի կորուստ, արիւնահոսութիւն եւ թմրութիւն բերանին մէջ, շարժող ակռաներ, ծնօտի շարժման դժուարութիւն եւ լորձաթաղանթի վրայ կարմիր եւ ճերմակ բիծեր:

Մասնագետներու կարծիքով՝

բերանի խոռոչին մէջ ուռուցք կրնայ զարգանալ այտերու, քիմքի, շրթունքներու կամ լիւնտերու ներսի բաժինին մէջ: NHS-ը կը յանձնարարէ դիմել բժիշկի, երբ զգացուի վերը նկարագրուած ախտանշանները, որովհետեւ այդ ախտանշանները կրնան վկայել այլ հիւանդութիւններու մասին:



«Զարթոնք» Հայրենիքի Մեջ - 71 -

Ներգրաւել Նիկոլ Փաշինեանին Որպէս Մեղադրեալ...

Սկիզբը էջ 03

Եթէ դուք մտածում եք, որ Նիկոլ Փաշինեանի կառավարութիւնը մեզ ազատել է պատերազմից, չարաչար սխալում եք: Եթէ մենք այսօր դուրս չգանք մեր յարմարաւետութիւնից, ապա վաղը կարող է ուշ լինել: Հայ ազգը խաղաղասէր ազգ է, բայց, կը ներքը, ոչխար չէ: Մենք պետք է բոլորին ցոյց տանք, որ մենք ենք տերը մեր երկրի»,- իր խօսքը աւարտեց Արա Զօհրապեանը:

Մամուլի ասուլիսից յետոյ Ազատագրական շարժման անդամները շարժուեցին դէպի ՀՀ գլխաւոր դատախազութիւն՝ դիմումը յանձնելու: Այդ նոյն ժամանակ 44-օրեայ պատերազմում զոհուած զինծառայողների



ծնողները Շառլ Ազնավուրի հրապարակում բողոքի ցոյցից յետոյ իրենց որդիների նկարներով լուռ երթով եւս շարժուեցին դէպի Դատախազութիւն: Նրանց պահանջը եւս նոյնն է՝ պատասխանատուութեան ենթարկել Նիկոլ Փաշինեանին եւ բոլոր մեղաւորներին իրենց որդիների սպանութեան համար:

Նրանք նաեւ պահանջեցին գլխաւոր դատախազ Արթուր Դաւթեանին իջնել եւ խօսել իրենց հետ: Դաւթեանը իջաւ, սակայն մի քանի րոպէով, քանի որ նրան տեսնելով ծնողները վրդովուեցին: Դատախազը, դիմելով զոհուած զինծառայողների ծնողներին, ասաց. «Ձեր պահանջի արդարացիութիւնը ոչ մի վայրկեան չի կարող վիճարկուել: Բայց վստահ եմ եկել եք, որ հասկանաք այդ պահանջին իրականացման ուղղութեամբ գործ արւում է թէ՛ ոչ: Դրա համար առաջարկում եմ խումբ կազմել ու հանգիստ միջավայրում խօսել, բոլորիդ հարցերին պատասխանել»: Դրանից յետոյ դատախազը հեռացաւ: Ծնողները մերժեցին դատախազի առաջարկը, քանի որ իրենց պահանջն էր ընդունել բոլորին եւ բացատրութիւն տալ:



Աւելի ուշ, ՀՀ գլխաւոր դատախազութեան ներկայացուցիչը հաւաքուածներին յայտնեց, որ Դատախազութիւնը ապրիլի 27-ին գրաւոր ծանուցմամբ եւ պաշտօնական կայքով կը տեղեկացնի իրենց փոխանցած միջնորդութեան վերաբերեալ պատասխանը: Աշխատակիցը նշեց, որ դա գլխաւոր դատախազի պաշտօնական պատասխանն է:



Յիշեցնենք, որ հարիւրաւոր փաստաբանների երկարատեւ պայքարից յետոյ, ՀՀ գլխաւոր դատախազութիւնում յարուցուել է քրեական գործ՝ դաւաճանութեան յատկանիշներով: Սակայն, քրեական գործում որեւէ առաջընթաց չկայ: Չհուած զինծառայողների ծնողները, Ազատագրական շարժման անդամները պահանջում են՝ գործի քննութիւնը արագացնել, Նիկոլ Փաշինեանին ներգրաւել որպէս մեղադրեալ, իսկ իրենց տուժողի իրաւայաջորդ:

Տօնական Հրճուանքը Միասնութիւն Կը Պահանջէ

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Ծաղկազարդ էր, հաւատարիմ էին աւանդութեան պիտի այցելէինք թաղին եկեղեցին եւ Յիսուսի Երուսաղէմ մուտքը խորհրդանշող ձիթենեաց ճիւղերով պիտի վերադառնայինք տուն: Ծաղկազարդի լուրջ խնդիրներէն մէկը նախորդ տարիէ մնացած եւ հետզհետէ չորացած ձիթենեաց ճիւղերէ ձերբազատուիլն է: Անցեալին այդ ձերբազատման լաւագոյն միջոցն էր, վառարանին մէջ վառելը: Այսօր այլեւս վառարան չ'ունինք մեն բնակարաններէն ներս: Աղբաման նետելն ալ մեղք կը համարուի: Կարծես լաւագոյն միջոցը պիտի ըլլայ ամբողջ տարուայ մը ընթացքին խունկի փոխարէն կրակին յանձնուած տերեւներու մնացորդացը դարձեալ բնութեան վերադարձնել: Բայց ո՞ր եւ ինչպէ՞ս: Աւանդապաշտ հաւատացեալի համար բաւականին լուրջ խնդիր մըն է այս:

Այդ հոգը վերջապէս կը գտնէ իր լուծումը, բայց անդին կան շատ աւելի լուրջ խնդիրներ, որոնք դժուար լուծելի կը մնան մեր դիմաց: Այս տարի Ուքրաինայ մէջ աւելի քան 4 միլիոն ժողովուրդ նոյնիսկ մտքով անգամ չ'անցներ թէ ի՞նչ պիտի ընէ նախորդ տարուայ Ծաղկազարդի ճիւղերը: Ի վիճակի չէ այդ մասին խորհելու, քանի որ տունը ետին թողած եւ գաղթականութեան ցուպը ի ձեռին ինկած է օտար ճանապարհներ: Այս պահուն անհրաժեշտութիւնը գլխուն վերեւ տանիք մը գտնել է իր ու ընտանիքին համար:

Յետմիջօրէի ծրագիրներուն համար կանուխ կը բաժնուինք եկեղեցիէն: Կը տեսնենք մեզ նման ուրիշ կանուխ հեռացողներ ալ, որոնց ձեռքերին ձիթենեաց ճիւղեր ուղղուած են իրենց տունները: Ժողովուրդի ներկայութիւնը թաղին մէջ գունդ առ գունդ ձիթենեաց ճիւղերով անցնողներու բազմութիւնը

հրճուանք կը պատճառէ: Ահա այս տարի ալ արժանացած ենք իհն աւանդոյթը կրկին ապրելու ուրախ առիթին: Ակամայ կը տարուիմ մտածել թէ Զիւլի, Լվիւսովի կամ Ուքրաինական այլ քաղաքներու բնակիչներ տարի մը առաջ նոյն գոհունակութեամբ վերադարձած էին իրենց տունները եւ մտքով անգամ չէին անցուցած թէ տարի մը վերջ ինչէր կրնան պատահիլ:

Անշուշտ համայն մարդկութիւնը, բայց այդ բոլորի մէջ յատկապէս հայերս պարտաւոր ենք բոլորէն աւելի գերզգայուն ըլլալու պատերազմի կործանիչ հետեւանքներուն դիմաց: Չէ որ մենք շատ դառն հատուցեցինք այդ արհաւիրքին համար:

Մտած ենք Մեծ Պահքի վերջին շաբաթը կամ ինչպէս կ'ըսենք սովորաբար Աւագ Շաբաթի օրերուն: Չատիկ է մեր առջեւ ցնծութիւն՝ տօնական ապրումներ: Պարտինք գիտնալ թէ անարդար է ուրիշներուն ողբ ու կոծին մէջ տօնական օրեր ըմբռնելը: Չէ որ բոլոր կրօններու մէջ կը խրատուի նոյն պատգամը՝ «Ուրախացնելով ուրախացիր»:

Անշուշտ ընթերցողը իրաւունք ունի հարցնելու «Բայց ինչպէ՞ս»: Իւրաքանչիւրս պարտաւոր ենք այդ ելքի միջոցը մեր սեփական դատողութեամբ գտնելու: Պիտի վստահեցնենք թէ այս մասին մտածող իւրաքանչիւր անհատ պիտի գտնէ իր կարողութեան թելադրած լուծումներն ալ:

Միշտ հաւատացած եմ այդ լուծումներու միասնական հունի մը մէջ հոսելուն պարունակած ներուժին:

Այս հաւատքով ողջունենք Զրիստոսի հրաշափառ յարութեան տօնը, միասնաբար գոչելով՝ «Զրիստոս Յարեալ ի Մեռելոց: Մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց»:

«Ակօս»

Մահագրական

Սրտի խօսք՝ Պրն. Գառնիկ Եագուլաեանին Մահուան Քառասունքին Առթիւ

Սիրելի Գառնիկ քեռայր, կ'ուզեմ սրտի խօսք ըսել մահուանդ քառասունքին առթիւ: Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ թէ հայրենիքի և թէ Լիբանանի մէջ: Աստուած հոգիդ լուսաւորէ լոյս իջնէ գերեզմանիդ: Այս բոլորէն վերջ ես կ'ուզեմ նաեւ մեծարել քեզ: Քանզի, քու բոլոր կատարած ազգային և բարեսիրական գործունեութիւններդ մնացած են թաքուն: Ու հիմա, սիրելի քեռայր, արտօնէ, որ հրապարակեմ զանոնք, քանի որ դուն չէիր ուզեր որ խօսուի այդ բոլորին մասին, որովհետեւ այդ քու համեստ և խոնարհ համոզումդ էր: Յետ մահուանդ ես կ'ուզեմ զանոնք հրապարակել սակայն, այն մտայնութեամբ, որ օրինակ կրնայ դառնալ հանրութեան:

Դո՛ւն օգնեցիր հայ աշակերտին՝ ապահովելով իր դպրոցական կրթաթոշակը, հայ մտաւորականին, խմբագիրին, հայ մամուլին և գրողին՝ գիրքին ծախսերը հոգալ, այսինքն մեկենասութիւնը յանձն առնել, դեռ անելին՝ չքաւոր ընտանիքներու նիւթական օգնութիւնները, այս բոլորը ես քաջ գիտեմ: Քեռայր իմ աննման եզակի անձնաւորութիւն, քու պատկառելի կերպարդ, հեգհամբոյր ժպիտդ՝ կը յուսադրէր ամէն դժուարութիւն: Քեռայր ջա՛ն իմ սիրելի լուսապայծառ դիմագիծդ, լուսապսակ ճակատդ այս բոլորը կը վկայեն, որ դուն եղած ես ազնուական տոհմի այն մեծ Եագուլաեան ընտանիքին զաւակը: Սիրելի քեռայր, ասկէ 30 տարիներ առաջ միասին երգեցինք այն երգը՝ որ սրտիդ կը խօսէր. Դուն առաջարկեցիր որ երգեմ: «Գնա՛ կռուակ երկրէ-երկիր ու ետ դարձիր բարո՛ւ՝ դառնա՛ս»: Արդե՞՞ք նախախնամութիւնն էր, որ մղեց այդ երգը երգեմ: Ու ահա՛, դուն ալ գացիր շատ մը երկրէ-երկիր բարով դառնալու համար մայր հայրենիք: Այդպէ՛ս էր ցանկութիւնդ



զոր կատարուեցաւ լի ու լի: Եկար մայր հայրենիք, կեցութիւնդ անցուցիր հոն՝ մայր հայրենի հողի վրայ, բայց... աւա՛ղ, վախճանդ եղաւ հոն... Բայց ճիշտ... գուցէ քու ցանկութիւնդ էր: Ցանկամ տեսնեմ զիմ Կիլիկիան...»

Սիրելի Անի-Անահիտ, Գառնիկին կողակիցը, թանկագին կեսը, կեանքի ընկերը, մէկ խօսքով իր եարը:

Անահիտ իմ սիրելի, տիւ եւ գիշեր հսկեցիր իր սնարին մօտ՝ անցուցիր դժուարին օրեր: Վարձքդ կատար և երկնային միսիրարութիւն: Իսկ Արա՛մը տղամարդու վայել գիտակցութեամբ թիկունք կեցաւ քեզի՝ և իր պուճուր քոյրերուն:

Սիրելի քեռայր իմ պատուական. կը խոնարհիմ քու շիրմաքարիդ առջեւ, կ'աղօթեմ ---- Աստուած թո՛ղ վառ մնան միմեքը միշտ և գուլար-գուլար ծխացող խունկը հայրենի:

«Երթա՛մ ննջեմ զիմ Կիլիկիա...»

Քեզ միշտ յիշող՝
ՎԻԲԻ ԿՈՐԿՈՏԵԱՆ-ՉԱԹԱԼՊԱՇԵԱՆ
Պէյրուկ

Ցեղասպանութիւն 100+7

Ուրուկուէյ քննադատեց Չաւուշօղլուի Հակահայ Կեցուածքը

Ուրուկուէյի նախագահ Լուիս Ալպերթօ Լաքալէ Փօու քննադատեց Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլուտ Չաւուշօղլուն՝ Սոնթեվիտեյի մէջ հայ ցուցարարներուն ուղղութեամբ թուրք ազգայնամոլներուն՝ «Գորշ գայլեր»ուն, նշանը ցոյց տալուն համար: Այս մասին կը հաղորդէ Armenpress.am-ը:

«Շատ ցաւալի է, որ Չաւուշօղլու խումբ մը հայերու ցոյց տուաւ թրքական ծայրայեղ ազգայնական «Գորշ գայլեր»ու շարժումին նշանը: Թուրքիոյ




արտաքին գործոց նախարարին վերաբերմունքը պետք է խիստ քննադատուի: Հայ համայնքը նեղացած է, եւ իրաւունք ունի», 25 Ապրիլին յայտնեց Ուրուկուէյի նախագահը:

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Գոհարներով շքեղապէս զարդարուած, Չըքնաղագեղ կին մ'է. գընա՛յ դէպի լեռ. ճաճանքք արփույն, գո՛գ իւր գըլխէն կըտըրուած, Ի տիեզերս սըփոռին՝ աննի՛ւթ իբրեւ հեր: Շուշան եւ վարդ գոգցես ցոլմունքն միայն Կընոջ այտիցն ու գիրգ ուլան...: Ճանչե՛ս զայն:

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ



ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՑՈՅՑ

28 2022
ԱՊՐԻԼ

Կրկ Երկ Երեք Գրք Հնգ Ուրբ Շբթ

					1	2
3	4	5	6	7	8	9
10	11	12	13	14	15	16
17	18	19	20	21	22	23
24	25	26	27	28	29	30



ԵՐԱՆՈՒՅԻ ԱՍԼԱՄԱՇԵԱՆ

(1910 – 1998)

«Հորտենզիաներ»

Հայկական Լուրեր

«Պիտի Հակասեխենք Կառավարության Շենքը»...

Սկզբը էջ 01

Նախաձեռնության համահիմնադիրներն Արա Չոհրապետը յայտարարեց, որ իշխանությունները ամեն ինչ ըրած են, որ այլասերուածութիւնը տեղ գտնէ մեր երկրին մէջ. «Յիշում էք Սթամպուլեան կոնվենցիա, Լանգարօթէի կոնվենցիա: Մենք պետք է ազատուենք այլասերութիւնից: Այսօրուայ ակցիան այդ նպատակն ունի», ըսաւ Չոհրապետը: Մինչ շարժման մասնակիցները կը

քալէին Կառավարութեան շէնք, ոստիկանները կանգնեցուցին, հարցուցին՝ ո՛ւր կ'երթան, ապա յայտնեցին, Կառավարութեան շէնքը յատուկ պահպանուող տարածք է, կոչ ընելով շրջանցել Կառավարութեան շէնքը:

Քիչ անց ոստիկանները բերման ենթարկեցին Վահագն Զախալեանը, Նայիրի Դոնիկեանը եւս մի քանի հոգի, միւսները հրելով հեռացուցին Կառավարութեան շէնքէն:

ԳԵՌԳ ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Գ.Մ.Գ.Մ.-ի Դատակազմը կը յայտնէ, թէ բացուած է 2022-ի նոր գործեր ներկայացնելու շրջանը:

Մրցանակը կ'ընդունի գրական թէ ուսումնասիրական որեւէ նոր, անտիպ, կամ գիրքի ձեւի տակ ցարգ լոյս չտեսած գործեր՝ առ ի գնահատում եւ հրատարակութիւն:

Գրական, իմաստասիրական, պատմական, եկեղեցագիտական, բանասիրական եւ Հայ Մշակոյթի այլ կալուածներուն վերաբերող գործերը, Հայերէն կամ օտար լեզուներով գրուած, պէտք է Դատակազմին Հասած ըլլան մինչեւ 31 Օգոստոս 2022:

Առաջուած գործերը պէտք է ըլլան ա) մեքենագրուած, բ) երեք օրինակով, գ) խտասայիկի վրայ արձանագրուած: Անոնք պէտք է ներկայացուին A4 թուղթի չափով եւ բաղկանան նուազագոյնը 9 պրակէ (144 էջ):

Դատակազմին կողմէ գնահատուած գործերը կ'արժանանան հրատարակութեան:

Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ Դատակազմին մաս կը կազմեն՝ Գերշ. Վարուժան Արք. Հերկելեան, Տեառք Տոբթ. Յովհաննէս Թապալեան (ատենապետ), Ահարոն Շիրտմեան (ատենադպիր), Կարօ Յովհաննէսեան, Համբիկ Մարտիրոսեան եւ Պարոյր Աղապաշեան:

Դիւան Գ.Մ.Գ.Մ.-ի Դատակազմի

Հասցէ՝

Armenian Catholicosate of Cilicia

P.O.Box 70317

Antelias – Lebanon

E-Mail: chancellor@armenianorthodoxchurch.org

Խնդրանք: Կը խնդրուի սփիւռքահայ թերթերէն արտատպել:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Ազգային Բարերար Տիար Գառնիկ Եագուպեանին մահուան քառասունքին առիթով ՉԱՐԹՕՆԵ-ին կը նուիրեն.

ՏԵՐ ԵՆ ՏԻԿԻՆ ԱՐՄԵՆ և Մարալ Կորկոտեան 300,000 լ.ո.
ՏԻԿԻՆ ՎԻԳԻ Կորկոտեան-Չաթալպաշեան 300,000 լ.ո.

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեւաբար՝ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեանս տեսակետը: Կամքէ անկախ սպրդած վրիպակներու պարագային, կ'ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:

Առողջապահական

«Խելացի» Ժամացոյցը Կը Գնահատէ Օրկանիզմին Արձագանգը Քորոնա Ժահրին ԴԵՄ Պատուաստին

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Scripps Research Institute-ի գիտնականները «Խելացի» ժամացոյցներու միջոցով գնահատած են մարդու օրկանիզմի արձագանգը քորոնա ժահրային պատուաստներուն: Այս հետազոտութիւնը հրապարակուած է որչ Digital Medicine ամսագրին մէջ:

Հետազոտութեան ընթացքին, մասնագէտները վերլուծած են աւելի քան 5600 հիւանդի քունի ընթացքին սրտի կծկումներու յաճախականութեան մասին «սենսըր»ներու տուեալները: Բացայայտուած է, որ պատուաստի առաջին դեղաչափը ստանալէն ետք, սրտի կաթուածներու յաճախականութիւնը զգալիօրէն կը բարձրանայ պատուաստի ստացման յաջորդ օրը: Պատուաստումէն երկու օր անց, անկա կը հասնէր իր գագաթնակէտին եւ կը վերադառնար բնական վիճակին՝ առաջին դեղաչափէն չորս օր անց, իսկ երկրորդէն ետք՝ վեց օր անց: Բացայայտուած է, որ տարբեր պատուաստներ կրնան տարբեր ձեւով ազդել օրկանիզմին վրայ: Այսպէս, ամենէն մեծ ազդեցութիւնը նկատուած է երիտասարդներու շրջանակին մէջ՝ Moderna պատուաստի երկրորդ դեղաչափի ներարկումէն ետք: Գիտնականները նաեւ նկատած են, որ կիներու մօտ աւելի մեծ փոփոխութիւններ նկատուած



են հանգիստի ժամանակ, քան տղամարդոց մօտ՝ պատուաստի առաջին դեղաչափէն ետք 5 օրուան ընթացքին: Պարզուած է, որ 40 տարեկանէն վար հիւանդներու մօտ հանգիստի ժամանակ սրտի կծկումներու փոփոխութիւնները աւելի բարձր եղած են, քան տարեց մարդոց մօտ, բայց՝ միայն երկրորդ դեղաչափէն ետք: Անոնք նոյնպէս նկատած են, որ կիներու մօտ սրտի կծկումներու յաճախականութիւնը աւելի մեծ փոփոխութիւններու կենթարկուէր հանգիստի ժամանակ, քան տղամարդոց մօտ պատուաստի առաջին դեղաչափէն ետք 5 օրուան ընթացքին:

«Հակառակ որ «Ֆիզիոլոճիքը» արձագանգի եւ դիմադրողական պատասխանի միջեւ կապը տակաւին պէտք է ուսումնասիրուի, թուային դիտարկումը կրնայ նոր միջոց տրամադրել մարդոց յայտնաբերելու համար, թէ որո՞նք ի վիճակի չեն համապատասխան ձեւով տանելու պատուաստումները», - նշած է հետազոտութեան հեղինակ տոքթօր Սթիվըն Սթեյնհուլ:

Aphil.com

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԲԸՄ- ՀԵԸ «ԱՐԻՆ» ՊԱՐԱԽՈՒՄԲ

ՀԲԸՄ-ՀԵԸ-ի «ԱՐԻՆ» ՊԱՐԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՎԵՐՍԿՍԻ ԻՐ ՓՈՐՁԵՐՈՒՆ



Ուրբաթ, 29 Ապրիլ 2022-ի երեկոյեան, ՀԲԸՄ-ՀԵԸ-ի «Արին» պարախումբի վարչութիւնը, նոր պարուսոյց ժիրայր Զեչեճեանը հանդիպում մը պիտի ունենան պարախումբի անդամներուն եւ անոնց ծնողներուն հետ, ՀԲԸՄ-ի Տեմիրճեան կեդրոնի 5-րդ յարկին մէջ:

Ժամը՝ 5.30-էն 7.30՝ 5-15 փոքրեր եւ պատանիներ
Ժամը՝ 7.30-էն 8.30՝ երեցներ

ՆՈՐ ՎԵՐԵԼՔՆԵՐՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ՝
ՀԲԸՄ- ՀԵԸ «Արին» Պարախումբի Վարչութիւն